ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 6-ից 11-ը ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) կողմից կազմակերպված Հարկային մարմինների միջազգային հարցմանը (ISORA) նվիրված աշխատաժողովին մասնակցելու նպատակով քաղաք Ալմաթի (Ղազախստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Լիլիթ Մադոյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի գլխավոր հարկային տեսուչ,

2) Անի Գրիգորյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 5 բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն, ք.Ալմաթի 2024թ. հոկտեմբերի 6-ից 11-ը:

3. Հրավիրող կողմը՝

ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոն (CCAMTAC):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել Հարկային մարմինների միջազգային հարցմանը (ISORA) նվիրված հնգօրյա աշխատաժողովին: Աշխատաժողովը միտված էր մասնակիցներին ծանոթացնելու ISORA տվյալների օգտագործման առանձնահատկություններին և ընդգծելու առանձին հարկային մարմինների մակարդակով վարչարարության պլանավորման և կատարողականի գնահատման ընթացքում այդ տվյալները կիրառելու կարևորությունը:

Աշխատաժողովին մասնակցող տարածաշրջանային 8 երկրների միջև իրականացվել են փոխադարձ քննարկումներ, առանձին խմբային աշխատանքների շրջանակներում ներկայացվել են մասնակից երկրների հարկային վարչարարություններում կիրառվող փորձը, առկա թվային

տվյալների հիման վրա կատարվել են համեմատական վերլուծություններ, կազմվել ամփոփ տեղեկանքներ: Ուստի հանդիպումն աչքի է ընկել բովանդակալից ակտիվ քննարկումներով, գործնական խնդիրների առաջադրումով և փոխադարձ շփումներով:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովի շրջանակներում մանրամասն քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) ISORA տվյալների օգտագործման տարածաշրջանային փորձը և դրա կապը Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման (TADAT) գործիքի հետ,

2) տարածաշրջանի երկրների հարկային մարմինների կողմից վարվող վարչարարության ընդհանրական բնութագիրը՝ հարկերի տեսակներն ու հավաքագրվող եկամուտները, հարկային վարչարարության ծախսերն ու աշխատակիցների բաշխվածությունն ըստ գործառույթների և դեմոգրաֆիկ պատկերի,

3) հարկ վճարողների գրանցման և դասակարգման առանձնահատկությունները, կարգապահական ռիսկի կառավարման տարածաշրջանային փորձը,

4) հարկային ստուգումները և դրանց արդյունավետության գնահատումը, ինչպես նաև միջոցառումները, որոնք կիրառվում են նախքան ստուգումների իրականացումը,

5) խոշոր և փոքր հարկ վճարողների նկատմամբ կիրառվող վարչարարության առանձնահատկությունները, գերշահույթ ունեցող անձանց հարկման տարածաշրջանային փորձն ու մեխանիզմները,

6) հարկային մարմինների կողմից մատուցվող ծառայություններն ու հարկ վճարողների սպասարկումը, վարչարարական բեռն ու դրա նվազեցմանն ուղղված միջոցառումները,

7) հարկային հաշվարկների ներկայացման առանձնահատկությունները տարածաշրջանի երկրներում՝ հաշվարկների ներկայացման էլեկտրոնային և ինքնաշխատ լրացման (pre-filing) համակարգերի առկայությունը,

8) հարկերի վճարմանն ու ապառքների հավաքագրմանն առնչվող կարգավորումները,

9) հարկային վեճերի կառավարման առանձնահատկությունները մասնակից երկրներում,

10) հարկային և ոչ հարկային եկամուտների հավաքագրումը, հարկեր/ՀՆԱ ցուցանիշն ու դրանց դինամիկայի վերլուծությունը, ԱԱՀ վերադարձի գծով կիրառվող մոտեցումները:

Մասնակցել ենք գործնական բոլոր առաջադրանքների կատարմանը, դրանց շրջանակներում ծագած հարցերի պարզաբանմանը և ընթացիկ քննարկումներին, որոնցում ներկայացրել ենք Հայաստանում հարկային համակարգում կիրառվող օրենսդրական կարգավորումները: Մեր պրակտիկայում կիրառվող գործիքակազմը և ՀՀ հարկային օրենսդրության առանձնահատկությունները մեծ հետաքրքրություն են առաջացրել մասնակիցների շրջանում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովը հիմնականում կրել է գործնական բնույթ, տարբեր երկրների մասնակիցներից բաղկացած աշխատանքային խմբերին ներկայացված առաջադրանքների միջոցով վեր են հանվել հարկային վարչարարության տարբեր ուղղություններին առնչվող հարցեր, կազմակերպվել քննարկումներ: Աշխատաժողովը վարել են կազմակերպող կողմի մասնագետները, ովքեր ներկայացրել են ISORA հարցման շրջանակներում հավաքագրվող տեղեկատվության բնույթն ու կիրառության կարևորությունը, այդ տվյալների հիման վրա հարկային վարչարարության արդյունավետության գնահատման գործիքներն ու մեխանիզմները, ինչպես նաև առանձին աշխատանքային խմբերի համար կազմել են ISORA տվյալների բազայի կիրառության վրա հիմնված առաջադրանքներ, որոնց շրջանակներում պարզաբանվել են տարածաշրջանի երկրներում հարկային վարչարարությանն առնչվող բազմաբնույթ հարցեր: Քննարկումների արդյունքում բարձրացված հարցերի շուրջ ելույթ են ունեցել աշխատաժողովի մասնակից բոլոր երկրների ներկայացուցիչները, իսկ դասընթացի ավարտին յուրաքանչյուր երկրի պատվիրակություն առանձին սահիկաշարով ներկայացրել է նաև իր տեսակետը տվյալ երկրի հարկային վարչարարությունում ISORA տվյալների հնարավոր կիրառության, դրա կարևորության, ինչպես նաև աշխատաժողովի ընթացքում պարզաբանված առավել դիտարժան հարցերի վերաբերյալ:

Հայաստանի պատվիրակությունը կիսվել է հարկային վարչարարության տարբեր ուղղություններում կիրառվող փորձով, հարկային օրենսդրության գործող կարգավորումներով: Մասնավորապես ներկայացվել են Հայաստանում հարկ վճարողների գրանցման, հարկային հաշվարկների ներկայացումը և վճարումների կատարումն էլեկտրոնային եղանակով կատարելու գործընթացները, հարկային հսկողության իրականացման մեխանիզմները և այլն:

Վերջիններիս դրական արդյունքների մասին վկայում են նաև մյուս երկրների մոտ առաջացող հետաքրքրությունն ու հարցերը մեր երկրում կիրառվող կարգավորումների վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի ավարտին ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) կողմից մասնակիցները արժանացել են հավաստագրերի՝ «Հարկային մարմինների միջազգային հարցում (ISORA)» թեմայով աշխատաժողովը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ՊԵԿ ներկայացուցիչներին ծանոթանալ ISORA հարցման շրջանակներում հավաքագրված տվյալներին, դրանց անմիջական կիրառության միջոցով գնահատել վերջիններիս կարևորությունը հարկային վարչարարության արդյունավետության գնահատման գործընթացում, ծանոթանալ տարածաշրջանի հարկային համակարգերում կիրառվող փորձին:

Առաջիկայում նախատեսվում են մի շարք դասընթացներ և աշխատաժողովներ: Վերոնշյալ դասընթացներին հնարավորություն կա մասնակցելու թե՛ առցանց ձևաչափով, թե՛ ֆիզիկական ներկայությամբ:

Այլ երկրների հետ փորձի փոխանակումը կնպաստի ՀՀ ՊԵԿ գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Լիլիթ Մադոյան

Անի Գրիգորյան

16.10.2024թ.